ԲԱԺԻՆ 6. ԱԴԱՊՏԻՎ ՍՊՈՐՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀՏԴ 796.01 DOI: 10.53068/25792997-2022.1.5-215

ՀՀ-ՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԸ՝ ՈՐՊԵՍ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Ասիստենտ Ա.Մ. Գաբրիելյան,
մագիստրանտ Ա. Վ. Բերբերյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,
E-mail: angela.gabrielyan@sportedu.am,
annaberberyan80@gmail.com

Առանցքային բառեր: Լսողության խանգարում ունեցող անձ (ԼԽՈՒ), խուլ, չլսողների սպորտ, սոցիալականացում:

Հետազոտության արդիականություն: Չլսող մարդը մեր օրերում դիտվում է ոչ թե որպես առողջական շեղումներ, ուղղորդման և աջակցման կարիք ունեցող անձ, այլև՝ մարդ, որն ունի իր լեզուն և մշակույթը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը լսողության խանգարումներ ունեցող (ԼԽՈՒ) անձանց կյանքի կարևոր բաղադրիչներից են, քանի որ սպորտում չլսող անձինք կարող են իրացնել սեփական կարողություններն առանց սահմանափակումների: Սպորտով զբաղվող ԼԽՈՒ անձինք ձեռք են բերում հմտություններ, մոտիվացվում են նպատակներին հասնելու համար, կոփում են բնավորությունը, զարգացնում են ֆիզիկական կարողությունները: Կոլեկտիվում հաղորդակցումը մարզումների ընթացքում օգնում է հետագայում շփվել մարդկանց հետ: Թիմային պարապմունքները նպաստում են այլ մարդկանց վարքի գնահատման և նրանց հետ փոխգործակցելու կարողության ձևավորմանը [2,3,6]:

Դեռևս խորհրդային տարիներին հայ չլսող մարզիկները ԽՍՀՄ հավաքական թիմերի կազմում մասնակցել են միջազգային մրցաշարերի՝ տարբեր մարզաձևերում գրանցելով արդյունքներ: ՀՀ-ում անկախության տարիներին չլսողների սպորտն անկում է ապրել գրեթե բոլոր մարզաձևերում, բացառությամբ ըմբշամարտի, որը փոփոխական հաջողություններով շարունակում է զարգանալ [1,4,5]:

Այս ենթատեքստում կարևոր է հասկանալ, թե չլսողների սպորտը սոցիալականացման ինչ հնարավորություններ է ստեղծում ՀՀ-ում, և որ գործոններն են խոչընդոտում գործընթացը:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ԼԽՈՒ անձանց ֆիզիկական

կուլտուրայի և սպորտի վիճակը ՀՀ-ում և դրանց դերը ԼԽՈՒ անձանց սոցիալականացման գործընթացում:

Հետազոտության խնդիրները: Ուսումնասիրել ԼԽՈՒ աշակերտների, մարզիկների, ԼԽՈՒ անձանց հետ աշխատող մարզիչների, ԼԽՈՒ երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրենի կարծիքները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի և նշանակության վերաբերյալ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ հարցազրույց, հարցում, ստացված տվյալների վերլուծություն: Հարցումներն ու հարցազրույցներն իրականացվել են ԼԽՈՒ հատուկ կրթահամալիրում, Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցում և «Միկա» մարզահամալիրում:

ԼԽՈՒ հատուկ կրթահամալիրի աշակերտների հարցմանը մասնակցել են 5-12-րդ դասարանների 41 աշակերտ: Հարցաթերթը ներառում էր 25 հարց:

ԼԽՈՒ մարզիկների հարցմանը մասնակցել են չլսող 4 մարզիկ: Հարցաթերթը ներառում էր 13 հարց:

Մարզիչների հետ անցկացվող հարցազրույցին մասնակցել է 3 մարզիչ, որոնցից մեկը՝ չլսող: Հարցազրույց է անցկացվել նաև ԼԽՈՒԵ կրթահամալիրի տնօրենի հետ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի աշակերտների հետ անցկացրած հարցմանը մասնակցել են ԼԽՈՒ 11-18 տարեկան 41 աշակերտ. ծանրալսության աստիճանը՝ 3-ից 4-րդ: Հարցաթերթում ներառված առավել կարևոր 10 հարցերի արդյունքները ներկայացված են 1-ին աղյուսակում:

Անդրադառնանք աղյուսակի տվյալներին: Առաջին և երկրորդ հարցերի պատասխաններից երևում է, որ ԼԽՈՒ աշակերտների ճնշող մեծամասնությունը սիրում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկան, և հարցվողների կեսից ավելին մասնակցում են դասերին:

Երրորդ, չորրորդ և հինգերորդ հարցերի պատասխանները հուշում են, որ դպրոցում անցկացվում են միջոցառումներ, և հարցվողների մեծամասնությունը մասնակցում է այդ միջոցառումներին, հիմնականում նշել են էստաֆետային խաղերը, վոլեյբոլը, ֆուտբոլը, ըմբշամարտը, շախմատը, սեղանի թենիսը: Միևնույն ժամանակ հարցվողների մեծամասնությունը (80,4%) նշել են՝ դպրոցից դուրս կազմակերպվող միջոցառումներին չեն մասնակցում:

Աղյուսակ 1.

ԼԽՈՒ մարզիկների հետ անցկացված հարցման արդյունքները

№	Հարցեր	Այո	Ոչ
1.	Սիրում ե՞ք «Ֆիզիկական կուլտուրա» առարկան:	87,8%	12,2%
2.	Մասնակցո՞ւմ եք ֆիզկուլտուրայի դասին:	58,5%	41,5%
3.	Արդյո՞ք դպրոցում անցկացվում են սպորտային միջոցառումներ:	92,6%	7,4%
4.	Մասնակցո՞ւմ եք այդ միջոցառումներին:	87,8%	12,2%
5.	Անցկացվո՞ւմ են արդյոք սպորտային միջոցառումներ դպրոցից դուրս:	19.6	80,4%
6.	Զբաղվո՞ւմ եք որևէ մարզաձևով:	26,8% Ըմբշամարտ (72,7%), Ֆուտբոլ (45,4%), Շախմատ (18,1%), Վազք (9%)	73,2%
7.	ՀՀ-ում գիտե՞ք արդյոք ինչ մարզաձևեր կան խուլերի համար:	78,3% Ըմբշամարտ (70,7%), Ֆուտբոլ (60,9%), Վոլեյբոլ (48,7%)	21,7%
8.	Աշխարհում ի՞նչ մարզաձևեր կան խուլերի համար:	26.8%	73,2%
9.	Գիտե՞ք արդյոք հայտնի խուլ մարզիկների:	17%	83%
10.	Կարո՞ղ է արդյոք սպորտը դառնալ Ձեր ապագան:	7,3%	92,7%

Հետևաբար, կարող ենք արձանագրել՝ սպորտային միջոցառումների հարթակը սահմանափակվում է դպրոցով, և կա անհրաժեշտություն կազմակերպել տարատեսակ սպորտային միջոցառումներ՝ ներառելով հասակակիցների ավելի լայն շրջանակ:

Հարցաշարի վեցերորդ հարցի պատասխաններից կարող ենք եզրակացնել՝ հիմնական մարզաձևերն են ըմբշամարտը և ֆուտբոլը, ընդ որում՝ հավանաբար ըմբշամարտիկները զբաղվում են նաև ֆուտբոլով: Բոլորը նշել են, որ պարապմունքներն անցկացվում են դպրոցում:

Հարցաշարի յոթերորդ հարցի պատասխաններից նկատում ենք՝ իրազեկվածության ամենաբարձր տոկոսը վերաբերում է ըմբշամարտին:

Իսկ հարցաշարի ութերորդ և իններորդ հարցերի պատասխաններից պարզ է դառնում, որ հարցվողներից շատ քչերն են տեղյակ խուլ մարզիկների մասին, ընդ որում՝ «հայտնիների» շարքում անվանել են միայն մի քանի հայ խուլ մարզիկների: Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ անհրաժեշտ է ԼԽՈՒ աշակերտների շրջանում ընդլայնել խուլերի սպորտի և խուլ մարզիկների նվաճումների մասին գիտելիքների պաշարը, ինչը կստեղծի նաև սպորտով զբաղվելու լրացուցիչ մոտիվացիա:

Տասներորդ հարցին դրական պատասխան են տվել հարցվողների 7.3%-ը, ենթադրաբար սպորտով զբաղվող աշակերտներն են: Նրանց պատկերացումների շրջանակում են հետևյալ թեզերը՝ կարող ենք գումար վաստակել, մասնակցել օլիմպիական խաղերին, մարզիչ դառնալ, մրցումների մասնակցել: Այսպիսով՝ սպորտով զբաղվող ԼԽՈՒ աշակերտներն ունեն սպորտի ապագա տեսլականը:

ԼԽՈՒ մարզիկների հետ անցկացված հարցմանը մասնակցել են 4 խուլ բարձրակարգ մարզիկ՝ որոնցից 3-ը ըմբշամարտիկ, 1-ը՝ բասկետբոլիստ: Նրանցից 3-ն ունեն բարձրագույն կրթություն:

Պարզվեց, որ խուլ մարզիկների մարզիչներից ոչ մեկը չունի լսողության խանգարում, սակայն մարզիկները նշում են, որ հիմնականում նրանց հաջողվում է հաղորդակցվել միմյանց հետ:

Ըմբշամարտիկները մասնակցել են մրցումների, այդ թվում՝ միջազգային, ունեն մրցանակներ, մրցումների աշխարհագրությունն է՝ Թուրքիա, Վրաստան, Իրան, Ռուսաստան, Բելառուս, Եվրոպա: Չլսող բասկետբոլիստուհին ընդգրկված է ՀՀ հավաքականի կազմում, 2011-ին մասնակցել է 5-րդ, 2015-ին՝ 6-րդ, 2019-ին՝ 7-րդ Համահայկական խաղերին և 2013-ին՝ Իրանում անցկացված մրցաշարին:

«Ի՞նչ է տալիս Ձեզ սպորտը» հարցին բոլոր 4 մարզիկները խոսել են ֆիզիկական հատկությունների բարելավման մասին, իսկ 2-ը գնահատել են շփումը սպորտում: «Կարող է արդյո՞ք սպորտը դառնալ Ձեր ապագան» և «Ինչո՞ւ եք այդպես կարծում» հարցին մարզիկներն արտահայտել են իրենց պատկերացումները, որոնցում նշված են մարզիչ և ուսուցիչ դառնալու, սպորտում բարձր նվաճումներ ունենալու, գումար աշխատելու, խուլերի սպորտն առաջ տանելու գաղափարները:

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի

տնօրեն Լուսինե Բաբայանի հետ անցկացրած հարցազրույցից ստացել ենք հետևյալ արդյունքները: Շատ բարձր է գնահատում ֆիզկուլտուրայի և սպորտի դերը ԼԽՈՒ անձանց զարգացման, սոցիալականացման և, հատկապես շարժողական կարողությունների կատարելագործման գործընթացում: Տիկին Բաբայանը նշում է, որ ԼԽՈՒ աշակերտների և շրջանավարտների ներգրավվածությունը և հաջողությունները հատկապես ըմբշամարտում կարող են դիտվել որպես ԼԽՈՒ անձանց կայացման և բարեկեցության գործոն:

Վերջին տարիներին կրթահամալիրում փորձ է արվում զարգացնել ըմբշամարտի, ֆուտբոլի, շախմատի, նետաձգության խմբակների աշխատանքներ: Կան որոշ հաջողություններ, սակայն նաև խոչընդոտներ, որոնցից տ. Բաբայանը նշում է մի քանիսը՝

- տրանսպորտի խնդիրը,
- մարզադպրոցներում խուլ երեխաներ ընդունելու պատրաստակամության բացակայությունը,
- մարզիչների՝ ժեստերի լեզվին չտիրապետելու հանգամանքը,
- մարզիչների վերապատրաստման անհրաժեշտությունը,
- ծնողների սոցիալական վիճակը,
- խուլերի միջնակարգ կրթության որակի բարելավման խնդիրը:

Հաջորդիվ ներկայացնենք չլսող ըմբշամարտիկների թիմի մարզիչ Արգիշտի Բաբայանի հետ անցկացրած հարցազրույցի վերլուծությունը:

Արգիշտի Բաբայանը ինքը չլսող մարզիչ է: Նա գտնում է, որ սպորտը շատ կարևոր է խուլերի համար, քանի որ առաջին հերթին խուլ մարզիկը հնարավորություն է ստանում ցույց տալ իր կարողություններն աշխարհին, ընդլայնել շփումը: Որպես մարզիչ և գործող մարզիկ՝ նա նշում է, որ շատ կարևոր են խուլ և լսող մարզիկների համատեղ մարզումներն ու մրցումները: Հենց իր ներառվածության աստիճանը նա գնահատում է շատ բարձր: Այն հարցին, թե ինչպե՞ս սկսեց աշխատել որպես մարզիչ, Բաբայանը պատմեց, որ առիթ էր ստեղծվել փոխարինելու հիվանդության պատճառով բացակայող մարզչին, հետագայում կրթահամալիրում ընդունվեց աշխատանքի՝ որպես մարզիչ:

Խուլ մարզիկների հետ աշխատանքի բարդություններից Արգիշտին նշել է, որ նրանք դժվարությամբ են ընկալում և վերարտադրում ցուցադրվող շարժումները: Բաբայանը կարևորել է լսողների հետ համատեղ մարզումները:

«Ինչպիսի՞ հեռանկարներ եք տեսնում Ձեր սաների համար» հարցին Բաբայանը նշել է, որ կարող է սպորտը դառնալ մասնագիտություն, մարզիկները կարող են գումար վաստակել, մասնակցել միջազգային մրցաշարերին, դառնալ նաև մարզիչներ: Խուլերի ըմբշամարտի

զարգացումը Արգիշտին կապում է երկրի տնտեսական վիճակի հետ:

Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքում բացահայտել ենք մի եզակի օրինակ, այն է, որ ՀՀ «Էրեբունի» բասկետբոլի կանանց թիմում ընդգրկված է չլսող մարզուհի Լուսինե Սեդրակյանը: Թիմի ավագ մարզիչ Շուշիկ Սահակյանի հետ անցկացրած հարցազրույցը բավական հետաքրքիր բացահայտումների առիթ է տվել: Այսպես՝ Շ. Սահակյանը նշում է, որ լսողության բացակայությունը Լուսինեի դեպքում փոխհատուցվում է տեսողությամբ կողմնորոշվելու բարձր կարողությամբ, ինչը շատ կարևոր է խաղադաշտում: Լուսինեն մարզաձև է եկել իր քրոջ միջոցով, որը պարապում էր բասկետբոլ: Մարզիչը նկատել է երեխայի հետաքրքրվածությունն ու պատրաստակամությունը և ներգրավել աղջկան լսող մարզիկների թիմում, որտեղ Լուսինեն սկսել է արագ տեմպով առաջ ընթանալ:

Հաղորդակցումը Լուսինեի և մարզիկների, Լուսինեի և մարզիչի միջև կարելի է համարել ստացված, քանի որ լսողները սովորել են ժեստեր, իսկ Լուսինեն՝ հասկանալ շրթունքների շարժումներից, միմիկայից, ժեստերից:

Տիկին Սահակյանը կարևորում է սպորտի դերը չլսող անձանց կյանքում՝ որպես սոցիալականացման գործոն, սակայն մինչ չլսողների սպորտին անդրադառնալը նա նշում է ՀՀ-ում բասկետբոլ մարզաձևի ընդհանուր խնդիրները, դրանք են՝

✓ ՀՀ-ում բասկետբոլի թիմերը չունեն դահլիճներ,

✓ մարզիկները չեն վճարվում, զբաղված են այլ աշխատանքներով, ինչից տուժում է մարզիկների մարզավիճակը և, որպես արդյունք, թիմի մարզական պատրաստվածությունը:

Խուլերի բասկետբոլի հեռանկարների հետ կապված որպես խոչընդոտ Շ. Սահակյանը մատնանշում է Հայաստանի խուլերի միության պասիվությունը թիմ ստեղծելու, պայմաններ տրամադրելու և խուլ բասկետբոլիստին որպես մարզիչ ներգրավելու գործընթացներում:

Չլսող մարզիկների ըմբշամարտի հավաքական թիմի ավագ մարզիչ Մարտին Ալիխանյանի հետ անցկացրած հարցազրույցից պարզեցինք, որ Մ. Ալիխանյանը թիմի հետ աշխատում է 2009-ից: Սպորտի դերի վերաբերյալ չլսողների կյանքում նա հատկապես արժևորում է մարզիկների շփման շրջանակների ընդլայնման հնարավորությունը, լսողների միջավայրում ներգրավվումը, ընդհանուր զարգացվածության և ինքնագնահատականի մակարդակի բարձրացման, մարզիչ և ուսուցիչ դառնալու հեռանկարները:

Խուլերի հետ մարզման գործընթացում մարզիչ Ալիխանյանը նշել է հետևյալ խնդիրները՝

✓ հաղորդակցման որոշակի դժվարություններ՝ նույնիսկ ժեստերի լեզվի

թարգմանության առկայության դեպքում չի հաջողվում տեղ հասցնել ինֆորմացիան ողջ խորությամբ,

✓ չլսող մարզիկներն ունեն գիտելիքների ըմբռնման, յուրացման, վերարտադրման, կիրառման զգալի դժվարություններ,

✓ խուլ մարզիկներն ունեն մասնագիտական կրթություն ստանալու դժվարություններ:

Մարզաձևի հեռանկարների հետ կապված մարզիչը նշել է մի քանի խոչընդոտ՝

✓ մարզիկների տարիքային շեմը բարձրացել է, երիտասարդները քիչ են ընդգրկված,

✓ Հայաստանի խուլերի միավորումը (ՀԽՄ) տարբեր նախաձեռնություններին պասիվ է արձագանքում, չի ստանձնում պատասխանատվություն՝ պայմաններ (դահլիճ, տրանսպորտ) տրամադրելու հարցում,

✓ ՀԽՄ-ի կողմից չեն իրականացվում չլսողներին սպորտաձևերում ներգրավելու հավաքագրման աշխատանքներ,

✓ չեն իրականացվում ԼԽՈՒ հատուկ կրթահամալիրի, ՀԽՄ-ի, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի միջև կապերն ու կոորդինացված աշխատանքները:

Ամփոփելով անցկացրած հարցումների և հարցազրույցների արդյունքները՝ կարող ենք անցկացնել համեմատական զուգահեռներ: Այսպես՝ բոլոր հարցվածները միակարծիք են, որ ֆիզիկական կուլտուրան և սպորտը առաջին հերթին նպաստում են առողջության ամրապնդմանը, գեղեցիկ կազմվածքի ձևավորմանը, շարժողական կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, ինչն օգնում է գործունեության արդյունավետության բարձրացմանը, հասարակությունում իրենց լիարժեք զգալուն:

ԼԽՈՒ երեխաների հատուկ կրթահամալիրի աշակերտների ճնշող մեծամասնությունը սիրում են զբաղվել ֆիզիկական կուլտուրայով, սակայն միայն 26.8%-ն են զբաղվում սպորտով: Ըստ կրթահամալիրի տնօրեն Լ. Բաբայանի՝ այս ցուցանիշների պատճառներից է՝ մարզադպրոցներում ԼԽՈՒ անձանց ընդգրկվելու դժվարությունները, մարզիչների տեղեկացվածության բացերը, արդյունքում ԼԽՈՒ անձանց հետ աշխատելու վախերը և կարծրատիպերը:

Բոլոր հարցվածները բարձր են գնահատել սպորտի դերը որպես սոցիալականացման գործոն՝ նշելով հաղորդակցման շրջանակի ընդլայնումը, լսողների միջավայրում ներգրավումը, սպորտը՝ որպես ապագա դիտարկումը՝ մարզիկ, մարզիչ, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ աշխատելու, գումար վաստակելու, հասարակությունում լիարժեք ներառվելու հեռանկարները: Այս առումով որպես տեսանելի մոդել հատկանշական է Արգիշտի Բաբայան խուլ գործող մարզիկ, միաժամանակ մարզիչ անձի օրինակը:

Չլսողների սպորտի զարգացման խոչընդոտների մասին խոսելիս բոլոր հարցվողները նշել են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, ընդհանուր առմամբ սպորտի զարգացման դինամիկան ՀՀ-ում: Բացի նշված հանգամանքներից, չլսողների սպորտում ներգրավվելու խնդիրներից մարզիչներ Ալիխանյանը և Բաբայանը նշել են մարզիկների ըմբռնման, մտածողության ոչ բավարար մակարդակը: Սակայն բասկետբոլի մարզիչ Սահակյանն արձանագրել է, որ իր չլսող սանը չունի նման դժվարություններ, իսկ ԼԽՈՒ կրթահամալիրի տնօրեն Բաբայանը խոսել է ԼԽՈՒ անձանց միջնակարգ կրթության բարելավման անհրաժեշտության մասին, ընդգծելով, որ կրթահամալիրում ստացած գիտելիքները և ավարտական փաստաթղթերը չեն բավարարում բուհերում ուսումը շարունակելու պահանջներին:

Չլսողների սպորտի զարգացման անբարենպաստ գործոններից Ալիխանյանը և Բաբայանը նշել են ՀԽՄ-ի և «Խուլերի հայկական սպորտային կոմիտե»-ի պասիվությունը: Ալիխանյանը կարևորել է ԼԽՈՒ կրթահամալիր–ՀԽՄ–«Խուլերի հայկական սպորտի կոմիտե» ՀԿ կապի ամրապնդումը, փոխկապակցված աշխատանքների իրականացումը, որի արդյունքում խուլերի սպորտը կունենա առաջընթաց, իսկ խուլ մարզիկներն ունեն բավարար պոտենցիալ այս հարցում:

Մարզիչ Ալիխանյանը կարևորել է նաև խուլերի սպորտում ընդգրկվող մարզիչների պատրաստման և վերապատրաստման անհրաժեշտությունը:

Եզրակացություն.

1.Ֆիզիկական կուլտուրան ԼԽՈՒ աշակերտների համար ամենասիրված ոլորտներից է:

2. ԼԽՈՒ անձանց և այդ ոլորտում ընդգրկված մասնագետների կարծիքով ՖԿ և սպորտը զարգացնում են ԼԽՈՒ անձանց ֆիզիկական հատկությունները և շարժողական կարողությունները, որոնք օգնում են վերջիններին լիարժեք զգալ հասարակությունում:

3. ԼԽՈՒ մարզիկները սպորտն ընկալում են որպես շփման, մասնագիտության ձեռքբերման, գումար աշխատելու, այսինքն՝ սոցիալականացման կարևոր միջոց:

4. ԼԽՈՒ անձանց սպորտում ներգրավելու գործընթացում կան օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտներ:

5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի՝ որպես սոցիալականացման միջոց զարգացնելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան միջավայր՝ ներառելով կրթության և սպորտի ոլորտների ենթակառուցվածքները և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի խուլերի միավորում կենտրոնական վարչություն, Պատմություն և զարգացում 70, Նահապետ, Երևան, 2003, 192 էջ:
2. **Теория** и организация адаптивной физической культуры [Текст]: учебник. В 2 т. Т.1: Введение в специалльность. История, организация и общая характеристика адаптивнвой физической культуры /Под общей ред. Проф. С. П. Евсеева.-2-е изд., испр. И доп. – М.: Соверской спорт, 2007. – 291 с.: ил. ISBN 978-5-9718-0279-2
3. **Частные** методики адаптивной физической культуры [текст]: учебник / под общ. Ред. Проф. Л. В. Шапковой.-М.: Советский спорт, 2007.-608с.: ил. ISBN 978-5-9718-0116-0
4. http://www.irtek.am/views/act.aspx?aid=91411
5. https://www.facebook.com/Հայաստանի խուլերի միավորում-Armenian-Deaf-Society-189217767923792
6. https://cyberleninka.ru/article/n/fizicheskoe-vospitanie-shkolnikov-s-narusheniem-sluha

PHYSICAL CULTURE AND SPORT AS A FACTOR OF SOCIALIZATION FOR THE PEOPLE WITH HEARING IMPAIRMENT ACROSS THE REPUBLIC OF ARMENIA

Assistant: A.M. Gabrielyan,

Master student: A.V. Berberyan,

Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

SUMMARY

Key words: people with hearing impairment (PWHI), sport for deaf people, hard-of-hearing people, socialization.

Relevance. Physical culture and sport are deemed to be key components in the lives of people with hearing impairments (PWHI), as sport enables deaf people to self-realize with no limitation. During the years of independence involvement of hard-of-hearing people in sport has declined in almost all disciplines throughout Armenia, except for wrestling, which continues to evolve with variable success.

The aim of the research is to identify the status of physical culture and sport for hard-of-hearing people in the RA and their role in the process of PWHI socialization.

The research methods and organization involve survey, interview and analysis of the data obtained. The research was held in the Special Educational Complex for children with hearing impairments, in the Olympic Children and Youth Wrestling School after Norayr Musheghyan and in "Mika" Sports Complex. The survey involved hard-of hearing pupils, athletes with hearing impairments, their coaches, director of the Special Educational Complex for children with hearing impairments.

The research results. All the respondents confirmed that physical culture and sport contribute to the health promotion, develop motor skills, increase performance efficiency and enable hard-of-hearing people to feel fully integrated into society. They also valued the role of sport as a factor of socialization, underlying expansion of the communication scope, involvement in the environment of people not having hearing impairments, the opportunity to build sport career and attainment of coach or physical education teacher qualifications.

Among the factors hindering the development of sport for PWHI, the respondents noted the socio-economic situation across the Republic, the insufficient level of perception and understanding of PWHI, the need for retraining coaches for the deaf athletes and the passivity of structures associated with the PWHI.

Conclusion. Physical culture and sport are a great way for PWHI to socialize. In the development of physical culture and sport for PWHI there are numerous obstacles of socio-economic and organizational nature including issues linked to their education. Thus, for the sector development, it is required to create an appropriate environment with educational and sport facilities.

ФИЗИЧЕСКАЯ КУЛЬТУРА И СПОРТ КАК ФАКТОР СОЦИАЛИЗАЦИИ ЛИЦ С НАРУШЕНИЯМИ СЛУХА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Ассистент А. М. Габриелян,
магистрант А. В. Берберян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

РЕЗЮМЕ

Ключевые слова: лица с нарушениями слуха (ЛНС), спорт неслышащих, глухие, социализация.

Актуальность. Физическая культура и спорт являются важными компонентами жизни лиц с нарушениями слуха, так как в спорте неслышащие люди

могут самореализоваться без ограничений. В спорте неслышащих в РА за годы независимости наблюдался спад по всем видам,за исключением борьбы, которая с переменным успехом продолжает развиваться.

Цель исследования: выявить состояние физической культуры и спорта ЛНС в РА и их роль в социализации этой категории людей.

Методы и организация исследования. Методы исследования: опрос, собеседование, анализ полученных данных. Исследование проводилось в Специальном образовательном комплексе для детей с НС, Олимпийской детско-юношеской спортшколе по борьбе им. Норайра Мушегяна спортивном комплексе «Мика». В опросах участвовали ученики с НС, неслышащие спортсмены и их тренеры, директор Специального образовательного комплекса для детей с НС.

Результаты исследования. По мнению всех опрошенных, физическая культура и спорт способствуют укреплению здоровья, развитию двигательных навыков, повышению эффективности деятельности, появлению чувства полноценности в обществе для ЛНС. Они также оценили роль спорта как фактора социализации, отметив расширение сферы общения, вхождение в среду слышащих, перспективу построения спортивной карьеры, получения специальности тренера или учителя физкультуры.

Из факторов, препятствующих развитию спорта неслышащих, опрошенные отмечали социально-экономическое состояние в республике, недостаточный уровень восприятия и мышления ЛНС, необходимость переподготовки тренеров неслышащих спортсменов, пассивность структур, связанных с ЛНС.

Краткие выводы. Физическая культура и спорт являются важными факторами социализации ЛНС. В развитии физической культуры и спорта ЛНС существует ряд препятствующих факторов социально-экономического и организационного характера, в том числе в сфере образования. Для развития сферы необходимо создавать соответствующую среду, включая образовательные и спортивные структуры.

Հոդվածն ընդունվել է 11.02.2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 12.02.2022–ին: